

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԲԵՐՏ ՎԱՐԴԱՆԻ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ

ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԱԶԱՏԵԼՈՒ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АБРААМЯН АЛЬБЕРТ ВАРДАНОВИЧ

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ  
ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НА ОСНОВАНИИ ПРИМИРЕНИЯ  
С ПОТЕРПЕВШИМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – «Уголовное право и криминология; уголовно-исполнительное право»

ЕРЕВАН 2012

Ատենախոսության թեման հաստատվել է  
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ս. Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների  
դոկտոր, դոցենտ Ս. Դիլբանդյան  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Ա. Օսիկյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի  
21-ին ժամը 14<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի  
իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք  
Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012թ. նոյեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավաբ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Վաղարշյան

Тема диссертации утверждена в  
Ереванском государственном университете

Научный руководитель: к.ю.н., доцент С. Аракелян

Официальные оппоненты: д.ю.н., доцент С. Дилбандян  
к.ю.н., доцент А. Осикян

Ведущая организация: Образовательный комплекс полиции РА

Защита диссертации состоится 21 декабря 2012г. в 14<sup>00</sup> часов на  
заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции  
Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека  
Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читательном зале научных  
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 21 ноября 2012г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент

А. Вагаршян

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը:** Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սոցիալական, իրավական և քաղաքական փոփոխություններն առաջացրին ձևավորված և զարգացող հասարակական հարաբերությունները հստակ կարգավորելուն և պաշտպանելուն ուղղված նոր օրենքներ ստեղծելու անհրաժեշտություն: Հրատապ հարց դարձավ նաև քրեական նոր օրենսգրքի ընդունումը, որն առավելապես պետք է նպաստեր նոր հասարակության կայացմանը, դրանում օրինականության, իրավակարգի, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հաստատմանը:

ԽՍՀՄ տարիներից գործող քրեական օրենսդրությունն այլևս չէր համապատասխանում հայ հասարակության ո՛չ տնտեսական, ո՛չ սոցիալական, ո՛չ քաղաքական պահանջմունքներին և ո՛չ էլ, առավել ևս, մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային իրավական հանրահայտ սկզբունքներին: Այդ իսկ պատճառով հետխորհրդային առաջին իսկ տարիներից Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների դեմ մղվող պայքարի ոլորտում իրականացվող քաղաքականության կարևորագույն խնդիրներից էր քրեական օրենսդրության արմատական բարեփոխումը: Նշված խնդրի լուծման նպատակով 2003 թվականին ընդունվեց ՀՀ քրեական նոր օրենսգրքը, որում իրենց ամրագրումը ստացան բազմաթիվ նոր ինստիտուտներ, որոնցից մեկն էլ տուժողի հետ հաշտվելու պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելն էր:

Քննարկվող ինստիտուտը վաղուց արդյունավետորեն կիրառվում է բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Հունգարիայում, Բելգիայում, Լեհաստանում և այլն: Սակայն մեր քրեական օրենսդրության մեջ, ինչպես նշվեց, այն նորանուծություն է, որով, փաստորեն, օրենսդրորեն սահմանվել է «պատժիչ» արդարադատությունից «վերականգնողականի» անցում կատարելու հնարավորությունը: Այսինքն, տվյալ պարագայում գլխավոր, առանցքային կողմերը ոչ թե պետությունն ու հանցանք կատարած անձն են, այլ տուժողը և նրա նկատմամբ հանցավոր ոտնձգություն իրականացնողը:

Լիովին ընդունելով տվյալ ինստիտուտի նախատեսման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ հարկ է, սակայն, նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի կիրառման շուրջ տասը տարիների ընթացքում ծագել են վեճերի տեղիք տվող և հրատապ լուծում պահանջող բազմաթիվ հարցեր: Մասնավորապես, պարզաբանման կարիք ունի «հաշտություն» հասկացությունը: Արդյո՞ք դա ենթադրում է միայն տուժողի համաձայնությունը, թե՞ նաև հանցավորինը, և արդյո՞ք այն սահմանափակվում է միայն երկկողմանի համաձայնությամբ:

Բացի այդ, քննարկման առանձին թեմա է այն հարցը, թե որքանո՞վ է նպատակահարմար հիշյալ ինստիտուտի կիրառումը միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար: Հատկանշական է, որ բազմաթիվ քրեագետներ առաջարկում են նման հնարավորություն նախատեսել նաև միջին ծանրության հանցագործությունների պարագայում:

Միանշանակ մոտեցում առկա չէ նաև քննարկվող ինստիտուտը նախկինում հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառելու հնարավորության ընձեռման կապակցությամբ: ՀՀ օրենսդրությամբ հարցի նման լուծումը հնարավոր է, մինչդեռ, օրինակ, ՌԴ և մի շարք այլ երկրների քրեական օրենսդրությունները սահմանում են, որ տուժողի հետ հաշտության հիմքով հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատել հնարավոր է միայն առաջին անգամ հանցանք կատարած լինելու պարագայում:

Ինչպես տեսաբանների, այնպես էլ իրավակիրառողների շրջանում վիճաբանությունների տեղիք են տալիս նաև այն հարցերը, թե ինչպե՞ս պետք է վարվել, եթե տուժողի դերում հանդես է գալիս իրավաբանական անձը կամ տուժողը ոչ թե մեկն է, այլ մի քանիսը, կամ, եթե հանցավորներն են մի քանիսը: Այս առումով վեճերը հիմնականում ծավալվում են հետևյալ հարցադրումների կապակցությամբ: Մասնավորապես, կարելի է արդյո՞ք կիրառել այս ինստիտուտը, եթե, օրինակ, տուժողը համաձայնում է հաշտվել հանցավորներից միայն մեկի կամ մի քանիսի հետ, իսկ մյուսների պարագայում ընդհանուր հայտարարի չի գալիս: Կամ՝ ինչպե՞ս վարվել, երբ մի քանի տուժողներից միայն մեկն է հաշտվում հանցավորի հետ:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում ամրագրում ստացած ներկայիս ձևակերպման պարագայում միանշանակ պատասխան հնարավոր չէ տալ նաև այն հարցին, թե անչափահաս տուժողի կամ հանցավորի պարագայում ո՞վ պետք է դիտվի որպես հաշտության կողմ՝ անչափահասը, թե՞ նրա օրինական ներկայացուցիչը: Եթե անչափահասը, ապա ո՞ր տարիքից սկսած: Այս առումով առաջ է գալիս մեկ այլ հարց ևս՝ կարող է արդյո՞ք հոգեկան հիվանդությամբ տառապող և անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված տուժողը դիտարկվել որպես հաշտության կողմ:

Կարգավորման ենթարկված չեն նաև այն իրավիճակները, երբ մինչև հանցավորի և տուժողի միջև համաձայնություն կայացնելը կամ նրանց միջև բանավոր կայացված համաձայնության գրավոր ձևակերպումից առաջ տուժողը մահանում է: Ուստի բաց են մնում առնվազն հետևյալ հարցադրումների պատասխանները. կարող է արդյո՞ք նրա ժառանգը (իրավահաջորդը) կամ որևէ այլ անձ՝ հանդես գալ որպես հաշտվող կամ մահացած անձի բանավոր կամահայտնության գրավոր ձևակերպման կողմ, թե՞ այս ինստիտուտի կիրառումը կդառնա անհնարին:

Հենց վերոնշյալ հարցերի պարզաբանման անհրաժեշտությունն էլ ակնհայտ է դարձնում ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը: Տվյալ հանգամանքն էլ, գլխավորապես, պայմանավորում է տուժողի հետ հաշտվելու պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի տեսական վերլուծության և դրա կիրառման ժամանակ երևան եկած հիմնախնդիրներին տեսականորեն հիմնավորված լուծում տալու անհրաժեշտությունը:

Քննարկվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ-ում վերոհիշյալ հիմնախնդիրները մինչ օրս բազմակողմանի, համալիր ուսումնասիրության չեն ենթարկվել:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի հիմնախնդիրներին անդրադարձել են ճանաչված այնպիսի իրավաբան-գիտնականներ, ինչպիսիք են Ս.Ս. Ալեկսեևը, Խ.Դ. Ալիկպերովը, Վ.Ե. Բատյուկովան, Ս.Ն. Բրատուսը, Դ.Վ. Բուլգակովը, Ե.Վ. Դավիդովան, Լ.Վ. Գոլովկոն, Ե.Վ. Գրիգունովան,

Ա.Է. Ժալիճսկին, Վ.Յու. Իվոնինը, Ս.Գ. Կելինան, Ա.Բ. Կիբալնիկը, Ա.Ն. Կրասիկովը, Գ.Ա. Կրիգերի, Ի.Յա. Կոզաչենկոն, Ա.Ս. Միխլինը, Ա.Վ. Նաունովը, Ս.Ի. Նիկոլինը, Ի.Ս. Նոյը, Ա.Ա. Պիոնտկովսկին, Ա.Մ. Յակովլևը, Պ.Ս. Յանին, Պ.Ս. Ռոմաշկինը, Ռ.Ա. Սաբիտովը, Ա.Ի. Սանտալովը, Ե.Ա. Սիմոնովան, Վ.Վ. Սվերչկովան, Մ.Ս. Ստրոգովիչը, Ս.Ե. Վիցինը, Լ.Ա. Վոսկոբիտովան, Յու.Ս. Տկաչևսկին, Մ.Դ. Շարգորոդսկին, Ն.Ս. Շատիխինան, Վ.Վ. Ցենյովան, Ա.Վ. Ուսսը, Վ.Դ. Ֆիլիմոնովը և այլոք: Սակայն այս հեղինակների հետազոտությունների արդյունքները հիմնականում հնացած են և, բացի դրանից, այդ արդյունքները չեն վերաբերում Հայաստանի Հանրապետությանը:

Միևնույն ժամանակ ՀՀ-ում նշված ինստիտուտի վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ և հետազոտություններ գրեթե չեն իրականացվել: Դրանց թվում, թերևս, կարելի է առանձնացնել Ս.Վ. Առաքելյանի, Ռ.Զ. Ավագյանի, Ս.Ս. Ավետիսյանի, Ա.Յ. Գաբուզյանի, Մ.Վ. Գրիգորյանի, Յ.Ս. Խաչիկյանի, Ն.Ս. Մաղաքյանի, Ա.Ռ. Մարգարյանի, Տ.Վ. Սիմոնյանի աշխատությունները, որոնցում որոշ չափով անդրադարձ է կատարվում նաև տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու տեսական և գործնական հիմնախնդիրներին:

Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ սույն ատենախոսությամբ հետազոտության թեման ամբողջապես չի սպառվում, քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ լուծված չեն կամ լուծված են մասամբ, ուստի և այն հետագա ուսումնասիրությունների կարիք ունի:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության *օբյեկտը* տուժողի հետ հաշտվելու և դրա հետ կապված քրեաիրավական այլ ինստիտուտների (քրեական պատասխանատվության, քրեական պատասխանատվությունից ազատելու) տեսական և գործնական հիմնախնդիրներն են ՀՀ-ում:

Հետազոտության *առարկան են* հանդիսանում Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան զարգացած երկրների՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցերը կարգավորող քրեական օրենսդրությունը, ինչպես նաև տվյալ ինստիտուտի իրավակիրառական պրակտիկան:

**Հետազոտության նպատակներն ու խնդիրները:** Ատենախոսական սույն հետազոտության հիմնական *նպատակը* տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությունն է ՀՀ-ում: Նշված նպատակի իրականացման ձգտմամբ են պայմանավորված հետևյալ հետազոտական *խնդիրների* առաջ քաշումը և լուծումը՝

- սահմանել քրեական պատասխանատվության հասկացությունը և բացահայտել դրա նպատակներն ու նշանակման առանձնահատկությունները,

- պարզաբանել քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավաբանական բնույթն ըստ ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության,

- բացահայտել տուժողի հետ հաշտվելու որպես քրեաիրավական ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը,

- բնութագրել տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի առանձնահատկություններն ըստ ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության,

• գիտական վերլուծության ենթարկել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու չափանիշներն ըստ ՀՀ քրեական օրենսդրության,

• վեր հանել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արդի հիմնախնդիրները քրեական իրավունքի տեսության մեջ և իրավակիրառական պրակտիկայում,

• գնահատել քրեաիրավական տեսության մեջ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կապակցությամբ առկա վիճելի հարցերն ու դրանց լուծման տարբերակները:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության մեթոդաբանական հիմքն են իմացության դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծության, սինթեզի, անալոգիայի, պատմաիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակագիտական ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդները:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև հատուկ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ վիճակագրական տվյալների վերլուծությունը, հարցումը, համեմատական-իրավական վերլուծությունը և փաստաթղթերի հետազոտությունը:

Վերը նշված գիտական մեթոդների կիրառումն ապահովել է ատենախոսական հետազոտությանը ներկայացվող համալիր և միջճյուղային մոտեցման պահանջների կատարումը:

**Ատենախոսության տեսական հիմքը:** Ատենախոսության տեսական հիմքն են կազմել քրեական և քրեակատարողական իրավունքի, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև գիտագործնական համաժողովների, սեմինարների բազմաթիվ նյութեր:

**Հետազոտության նորմատիվ հիմքը:** Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքը, ՀՀ քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Լատվիայի և զարգացած մի շարք երկրների (ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Իտալիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների, Բելգիայի) քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսգրքերը:

**Հետազոտության փորձառնական (եմպիրիկ) հիմքը:** Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել 2003-2011թթ. ընթացքում ՀՀ-ում տուժողի հետ հաշտվելու հիմքով կարճված թվով 50 քրեական գործերի նյութերի՝ հատուկ նպատակով մշակված անկետայով կատարված ուսումնասիրության արդյունքները:

Միևնույն ժամանակ, սույն ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչականությունը և իրականացված ատենախոսական հետազոտության հետ համադրելիությունն ապահովելու նպատակով ուսումնասիրվել, վերլուծվել և օգտագործվել են տուժողի հետ հաշտվելու հիմնախնդիրների վերաբերյալ այլ տարա-

ծաշրջաններում և այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտվող ինստիտուտի կիրառման արդյունավետության գնահատման նկատառումներով նախապես մշակված ծրագրով համապատասխան հարցազրույցներ են անցկացվել իրավապահպան մարմինների 20 աշխատակիցների, 25 դատավորների և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված 10 անձանց հետ:

**Ատենախոսության տեսական նշանակությունը:** Աշխատանքի տեսական նշանակությունն այն է, որ դա հայրենական գիտության մեջ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համակողմանի, համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների և իրավակիրառական մի շարք խնդիրների լուծման համար:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Ատենախոսական սույն հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել հասարակության և պետության կենսագործունեության՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտին առնչվող տարբեր ոլորտներում, մասնավորապես՝

- քրեական և քրեադատավարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության մեջ,

- տուժողի հետ հաշտության հիմնախնդիրներին վերաբերող գիտական հետազոտություններում և գիտամեթոդական, ուսումնամեթոդական ձեռնարկներ պատրաստելիս,

- մանկավարժական գործունեության ընթացքում՝ իրավաբանական և այլ բուհերում քրեական իրավունք և քրեակատարողական իրավունք, ինչպես նաև քրեական դատավարություն դասավանդելիս,

- ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների կայացման ընթացքում և քննչական ու դատական մարմինների իրավակիրառական պրակտիկայում,

- մեթոդաբանական և կիրառական այլ նպատակներով:

**Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:** Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակած 3 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:** Հետազոտության *գիտական նորույթը* գլխավորապես պայմանավորված է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտի կիրառման հետ կապված հիմնախնդիրների տեսական ոչ ամբողջական մշակվածությամբ, ինչպես նաև ՀՀ քրեական և քրեադատավարական գործող օրենսդրության տեսականորեն հիմնավորված կատարելագործման անհրաժեշտությամբ:

Բացի դրանից, աշխատանքում հայկական իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ ատենախոսական մակարդակով և համակարգային, համալիր մոտեցման հիման վրա իրականացվել է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրների բազմակողմանի հետազոտություն: Դրա հիման վրա առաջ են քաշվել ՀՀ քրեական և քրեադատավարական գործող օրենսդրության կատարելագործմանը, ինչպես նաև իրավակիրառական համապատասխան պրակտիկայի բարելավմանն ու դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև *պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝*

1. Քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման դեպքերում կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով, ըստ ՀՀ գործող օրենսդրության, իրավակիրառողի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Սակայն, եթե առկա են քրեական պատասխանատվությունից ազատելու՝ օրենքով նախատեսված հիմքեր և պայմաններ, ապա քրեական պատասխանատվությունից ազատելու վերը նշված տեսակների կիրառման հնարավորության քննարկումը պետք է սահմանվի որպես պարտականություն: Ընդ որում, օրենսդրորեն պետք է սահմանել, որ նման դեպքերում իրավակիրառողը պետք է պատճառաբանված հիմնավորում ներկայացնի դրանց կիրառման ինչպես հնարավորության, այնպես էլ անհնարինության վերաբերյալ:

2. Անհրաժեշտ է օրենսդրական լուծում տալ տուժողի հետ հաշտության պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ժամանակ ծագող այնպիսի հարցերի, ինչպիսիք են այս ինստիտուտի կիրառման հնարավորությունն ու առանձնահատկությունները անչափահաս կամ անգործունակ տուժողի նկատմամբ հանցավոր ոտնձգության, ինչպես նաև մի քանի տուժողների կամ մի քանի հանցավորների առկայության պարագաներում: Օրենսդրական հրատապ կարգավորման կարիք է զգում նաև հանցագործությունից հետո տուժողի մահվան պարագայում այս ինստիտուտի կիրառման հնարավորության հարցը: Պարզաբանման և հստակեցման կարիք ունեն նաև տուժողի հետ մի քանի հանցակիցների, ինչպես նաև հանցավորի հետ մի քանի տուժողների հաշտվելու դեպքերում պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու առանձնահատկությունները:

3. Հանցանքը «առաջին անգամ» կատարելու հասկացության կապակցությամբ անհրաժեշտ է հիմք ընդունել այն դիրքորոշումը, որ, եթե խզվել են նախկին հանցագործության հետ անձի բոլոր իրավական կապերը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 8-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները), ապա նոր հանցանքը չի կարող դիտվել երկրորդ անգամ կատարված: Այլ բան է, որ նման դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել ոչ թե հանցանքը երկրորդ անգամ կատարելու փաստը, այլ հանցավորի անձը: Այսպես, եթե նա նախկինում դիտավորությամբ կատարել է համասեռ հանցագործություն և օրենքով սահմանված կարգով արդեն ազատվել է



քրեական պատասխանատվությունից, ապա նրա նկատմամբ դրսևորված մարդասիրությունը, փաստորեն, արդյունավետ չի եղել:

4. Թեև ՀՀ քրեական օրենսգիրքը հանցագործությունների ռեցիդիվի և համակցության դեպքերում տուժողի հետ հաշտվելու հիմքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն տվյալ ինստիտուտը չպետք է կիրառվի ռեցիդիվի և իրական համակցության պարագաներում, քանզի հանցագործությունների բազմակիության նշված տեսակների առկայությունն արդեն իսկ վկայում է հանցանք կատարած անձի կայուն հանցավոր դիրքորոշման մասին, մինչդեռ քննարկվող ինստիտուտի նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցանքի կատարումը կրում է պատահական, էպիզոդիկ բնույթ: Ուստի նշված հանգամանքներն անհրաժեշտ է ուղղակիորեն ամրագրել քրեական օրենսգրքում: Սակայն այս սահմանափակումը չպետք է տարածվի իդեալական համակցության դեպքերի վրա, քանի որ այս պարագայում, թեև, հանցավորի արարքում առկա են երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմեր, սակայն դրանք արդյունք են մեկ գործողության կամ անգործության և չեն կարող վկայել հանցանք կատարած անձի կայուն հանցավոր հակումների մասին: Բայց այն դեպքերում, երբ առկա է իդեալական համակցություն, որը բաղկացած է ինչպես ոչ մեծ ծանրության, այնպես էլ միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններից, տուժողի հետ հաշտության պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի կարող կիրառվել, քանի որ քրեական օրենքը հստակ պահանջում է, որպեսզի տուժողի հետ հաշտության պարագայում անձին քրեական պատասխանատվությունից ազատելն իրականացվի միայն ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքում:

5. ՀՀ գործող օրենսդրությամբ մասնավոր մեղադրանքի գործերով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար տուժողին պատճառված վնասի հարթման կամ փոխհատուցման պահանջ չի դրվում: Արդյունքում հակասություն է առաջանում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183-ի առաջին մասի միջև: Ուստի քրեական օրենսգրքում անհրաժեշտ է առանձին նորմով սահմանել մասնավոր հետապնդման գործերով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատկությունները:

6. ՀՀ քրեական գործող օրենսդրությամբ չի բացառվում, որ անձը, ում հետ տուժողը չի հաշտվել, հնարավորություն ունենա ազատվել քրեական պատասխանատվությունից մեկ այլ հիմքով՝ գործուն զղջալու հետևանքով, քանի որ դրա կիրառման համար տուժողի համաձայնության առկայությունը որևէ իրավաբանական նշանակություն չունի: Գիշտ է, գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս տուժողը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բողոքարկել կայացված որոշումը, սակայն նման իրավիճակում, փաստորեն, չեն ապահովվում տուժողի իրավունքները: Այս առումով ճիշտ կլինի, որ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվի համապատասխան նորմ, որը կսահմանի, որ, եթե հիմքեր կային կիրառելու քր. օր.-ի հոդված 73-ը, սակայն հանցավորի և տուժողի միջև հաշտություն չի կայացել, հանցավորը չի կարող ազատվել

քրեական պատասխանատվությունից նաև քր. օր.-ի հոդված 72-ի ուժով՝ գործուն գղջալու հիմքով:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը գործուն գղջալու և իրադրության փոփոխման դեպքերում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է համարում ինչպես ոչ մեծ, այնպես էլ միջին ծանրության հանցագործությունների պարագայում, ճիշտ կլինի հնարավոր համարել նաև ՀՀ քրեական օրենսգրքով տուժողի և միջին ծանրության հանցանք կատարած անձի հաշտության դեպքում վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը սահմանելը: Միջին ծանրության հանցագործությունների դեպքերում տուժողի և հանցավորի հաշտության պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183-ի 1-ին մասում օրենսդիրը, թվարկելով մասնավոր հետապնդման գործերը, նախատեսում է ոչ միայն ոչ մեծ, այլև միջին ծանրության հանցագործություններ: Այսինքն, եթե օրենսդիրը նման դեպքերում տուժողի կամահայտնությունը դիտում է որպես պարտադիր իմպերատիվ պահանջ և հանցավորին ազատում քրեական պատասխանատվությունից, ենթադրվում է, որ միջին ծանրության հանցագործությունների դեպքում տուժողի և հանցավորի միջև հաշտության կայացման պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության ընձեռումը լիովին արդարացված է:

**Աշխատության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՅ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ ակտերի ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ընդգծվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, քննարկվող թեմային առնչվող հիմնախնդիրների մշակվածության աստիճանը և գիտական նորույթը, ձևակերպվում են գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, պարզաբանվում են հետազոտության մեթոդական, տեսական և փորձառական հիմքերը, դրա տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի ընդհանուր բնութագիրը**», պարունակում է երկու պարագրաֆ:

Տվյալ գլխի առաջին պարագրաֆում՝ «**Քրեական պատասխանատվության հասկացությունն ըստ ՀՀ քրեական օրենսդրության**», հեղինակը ներկայացնում է քրեահրավական նշված ինստիտուտի հասկացության կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ արտահայտված տարբեր մոտեցումները և դրանց վերաբերյալ սեփական տեսակետները:

Նշվում է, որ քրեագետներից շատերը քրեական պատասխանատվությունն առաջարկում են հասկանալ երկու իմաստով՝ պոզիտիվ և նեգատիվ:<sup>1</sup> Միևնույն ժամանակ, հեղինակի խոսքերով, քրեական պատասխանատվության բաժանումը պոզիտիվի և նեգատիվի քրեաիրավական գիտության մեջ միանշանակ չի ընդունվում, քանզի առավել տարածված մոտեցման համաձայն, պոզիտիվ քրեական պատասխանատվությունը իրավական մեծ նշանակություն չունի, քանի որ քրեական պատասխանատվության մեկնաբանումը ոչ թե որպես օբյեկտիվ իրականություն, այլ որոշակի հոգեբանական գործընթաց, զրկում է տվյալ հասկացությունը իրավական բովանդակությունից: Ուստի արձանագրվում է, որ առավել ընդունելի է նեգատիվ քրեական պատասխանատվության տեսությունը, որն ունի կարևոր ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Նշվում է նաև, որ քրեական իրավունքի տեսության մեջ մինչ այժմ միասնական մոտեցում չկա ո՛չ քրեական պատասխանատվության հասկացության, ո՛չ դրա էության, ո՛չ էլ հիմքի վերաբերյալ: Մասնավորապես, քրեագետների մի մասը քրեական պատասխանատվությունը բնորոշում է որպես անձի պարտականություն՝ ենթարկվելու քրեական օրենքի ներգործությանը, կամ պարտականություն իր կատարածի համար պատասխան տալու պետության առջև: Մեկ այլ խումբ քրեագետների կարծիքով, պատասխանատվությունը ոչ թե պարզապես պարտականություն է կրելու իր համար անբարենպաստ հետևանքները, այլև դրանց փաստացի, իրական կրումն է: Մյուսները գտնում են, որ քրեական պատասխանատվությունը դատարանի դատավճռով անձի արարքին և այդ արարքը կատարած անձին տրված բացասական գնահատականն է, այդ անձի պարսավումը: Հաճախ քրեական պատասխանատվությունը նույնացվում է պետության հարկադրական ներգործության հետ: Ինչևէ, եզրակացնում է ատենախոսը, նշված բոլոր կարծիքներն էլ որոշակիորեն ճիշտ են, բայց դրանցից յուրաքանչյուրը բացահայտում է քրեական պատասխանատվության միայն մեկ, առանձին դրսևորումը: Այդ է պատճառը, ըստ նրա, որ վերջերս քրեական իրավունքի տեսության մեջ ավելի ու ավելի տարածում է ստանում այն տեսակետը, որ քրեական պատասխանատվությունը բարդ կառուցվածքային երևույթ է, որը բնութագրվում է մի քանի հատկանիշներով և ընդգրկում հետևյալ չորս տարրերը կամ փուլերը՝

1) հանցանք կատարած անձի պարտականությունը՝ պատասխան տալու պետության առջև,

2) դատարանի դատավճռով անձի արարքին տրված բացասական գնահատականը և այդ անձին պարսավանք արտահայտելը,

3) մեղավորի նկատմամբ նշանակվող պատիժը կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցները,

4) դատվածությունը որպես անձի դատապարտման յուրահատուկ քրեաիրավական հետևանք:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ Елеонский В.А. Уголовное наказание и воспитание позитивной ответственности личности. Рязань, 1979, էջեր 25-26, Похмелкин В.В. Социальная справедливость и уголовная ответственность. Красноярск, 1990, էջեր 38-45, Тарбагаев А.Н. Понятие и цели уголовной ответственности. Красноярск, 1986, էջեր 21-36, Чистяков А.А. Уголовная ответственность и механизм формирования ее основания. М., 2002, էջեր 58-61:

Նույն գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ըստ ՀՀ քրեական օրենսդրության», ատենախոսն անդրադառնում է քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված տեսակների ընդհանուր բնութագրի քննարկմանը: Այդ իմաստով նախ և առաջ նշվում է, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայությունը չի կարելի նույնացնել քրեական պատասխանատվությունից ազատելու հետ, քանզի տվյալ իրավիճակում խոսքը քրեական պատասխանատվություն չկիրառելու, այլ ոչ թե դրաբից ազատելու մասին է: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, հետևաբար նաև նրան քրեական պատասխանատվությունից ազատելու հարց չի կարող առաջանալ, եթե նա՝ 1) կատարել է արարք, որում բացակայում են քրեական օրենքով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշները կամ դրանցից թեկուզ մեկը (ՀՀ քր. օր.-ի հոդված 3), 2) կատարել է գործողություն կամ անգործություն, որը թեև ձևականորեն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում (ՀՀ քր. օր.-ի հոդված 18-ի 2-րդ մաս), 3) կանոնի հրաժարվել է հանցագործությունից (ՀՀ քր. օր.-ի հոդված 36), 4) կատարել է արարք, որում առկա է դրա հանցավորությունը բացառող որևէ հանգամանք (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 42-47):

Բացի այդ, նշում է հեղինակը, քրեական պատասխանատվությունից ազատելու մասին խոսք չի կարող լինել այն դեպքերում, երբ՝ 1) ապացուցված չէ մեղադրյալի մասնակցությունը հանցագործությանը, 2) առկա են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 35-ով նախատեսված հանգամանքները (անձը մահացել է, համաներման ակտ է ընդունվել և այլն):

Վերլուծելով ՀՀ քրեական քրեական նախկին օրենսդրության համապատասխան դրույթները՝ ատենախոսը նշում է, որ քրեական գործող օրենսգիրքն արդարացիորեն հրաժարվեց քրեական պատասխանատվությունից ազատելու այն տեսակներից, որոնք կապված են հասարակական ներգործության կիրառման հետ: Փոխարենը նախատեսվեցին այլ տեսակներ, որոնց արդյունավետությունը, ըստ նրա, կարող է ավելի բարձր լինել: Մասնավորապես, ՀՀ քրեական գործող օրենսգրքի Ընդհանուր մասում նախատեսված են քրեական պատասխանատվությունից ազատելու հետևյալ տեսակները.

- 1) գործուն զոջալու դեպքում (հոդված 72),
- 2) տուժողի հետ հաշտվելու դեպքում (հոդված 73),
- 3) իրադրության փոփոխման դեպքում (հոդված 74),
- 4) վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (հոդված 75),
- 5) դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով (հոդված 91),
- 6) քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատուկ տեսակ համաներումը (հոդված 82):

Նշվում է նաև, որ քր.օր.-ի Հատուկ մասի մի շարք հոդվածներում նախատեսված են, այսպես կոչված, խրախուսական նորմեր, որոնց ուժով անձը կարող է ազատ-

վել քրեական պատասխանատվությունից: Սրանք քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ դրսևորումներ են, որոնց պարագայում անձը կարող է ազատվել պատասխանատվությունից նաև միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք (ահաբեկչություն, զենքի կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, պետական դավաճանություն և այլն) կատարելու դեպքում:

Հեղինակն անդրադառնում է նաև անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր այնպիսի նախապայմանի քննարկմանը, որպիսին հանցանքն առաջին անգամ կատարելն է, և նշում, որ այդպիսին պետք է հասկանալ այն դեպքերը, երբ անձը՝

ա) փաստացի առաջին անգամ է հանցանք կատարել,

բ) նախկինում կատարած հանցանքի համար ցանկացած հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից,

գ) նախկին հանցագործության համար դատվածությունն օրենքով նախատեսված կարգով մարվել կամ հանվել է:

Այդ կապակցությամբ կարծիք է արտահայտվում, որ, եթե խզվել են նախկին հանցագործության հետ անձի բոլոր իրավական կապերը (քրեական օրենսգրքի հոդված 84-ի ութերորդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները), ապա նոր հանցանքը չի կարող դիտվել երկրորդ անգամ կատարված: Այլ բան է, որ նման դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել ոչ թե հանցանքը երկրորդ անգամ կատարելու փաստը, այլ հանցավորի անձը. եթե նա նախկինում դիտավորությամբ կատարել է համասեռ հանցագործություն և արդեն ազատվել է քրեական պատասխանատվությունից, ապա նրա նկատմամբ դրսևորված մարդասիրությունը, փաստորեն, արդյունավետ չի եղել:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Տուժողի հետ հաշտվելու որպես քրեաիրավական ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը» բաղկացած է երեք պարագրաֆից:

Տվյալ գլխի առաջին պարագրաֆում՝ «Տուժողի հետ հաշտությունը որպես քրեաիրավական կատեգորիա» ատենախոսը քննարկում է «Վերականգնողական» արդարադատության անկյունաքարային գաղափարների՝ տուժողին պատճառված վնասի փոխհատուցման, հանցանք կատարած անձանց վերասոցիալացման, կողմերի միջև հաշտության կայացման, սոցիալական արդարության վերականգնման առանձնահատկությունները: Հատուկ նշվում է, որ տվյալ դեպքում հիմնական շեշտը դրվում է ոչ թե պատժի, այլ կողմերի միջև հաշտության կայացման և վնասի փոխհատուցման վրա:

Այդ իմաստով առանձնացվում են «վերականգնողական» արդարադատությունը, այդ թվում՝ տուժողի հետ հաշտության դեպքում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելը, բնութագրող և դրական ազդեցություն ենթադրող հետևյալ գործոնները՝

- հանցանք կատարած անձի ապասոցիալացումից (հանցավորը չի մեկուսացվում հասարակությունից, ընտանիքից, նա չի օտարանում հասարակական տարբեր գործընթացներից) խուսափելու հնարավորությունը,

- ռեցիդիվային հանցավորության մասնաբաժնի և դրա բացասական հետևանքների նվազեցման նախապայմանների ստեղծումը,

- քրեական արդարադատության իրականացման, ինչպես նաև ազատագրվածան դատապարտվածներին պահելու համար կատարվող ծախսերի կրճատումը,

- խնայված ֆինանսական միջոցները հանցավորության դեմ պայքարի առավել բարդ խնդիրների լուծմանը (օրինակ՝ առավել ծախսատար քրեական գործերի քննության արդյունավետության ապահովմանը) ուղղելու հնարավորությունը:

Միաժամանակ ընդգծվում են քննարկվող ինստիտուտի կիրառման բացասական հնարավոր հետևանքները: Խոսքը, թերևս, այն մասին է, որ քաղաքական, ֆինանսական, պաշտոնական կամ այլ հիմքերով ամուր սոցիալական դիրքեր ունեցող հանցավորի առկայության դեպքում չի բացառվում տուժողի շահերի պաշտպանության թուլացումը: Բացի այդ, այն դեպքերում, երբ օրենսդրորեն հստակեցված չէ հանցավորի կողմից տուժողին պատճառված վնասի փոխհատուցման կոնկրետ չափը, չի բացառվում կամայականության դրսևորումը հանցավորի նկատմամբ և այլն:

Նշվում է նաև, որ «վերականգնողական» արդարադատության իրականացումը չի ենթադրում անհիմն ներողամտություն և թողտվություն, այլ ընդհակառակը՝ այն իրապես ապահովում է հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կիրառումը: Բանն այն է, որ տուժողի հետ հաշտության հիմքով հանցավորին կարելի է ազատել քրեական պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե նա ընդունում է իր կողմից հանցանքի կատարումը և պատրաստ է հատուցել կամ այլ կերպ հարթել պատճառված վնասը: Մինչդեռ «պատժիչ» արդարադատության դեպքում հանցավորն իրեն, որպես կանոն, հանգամանքների, իրավապահ մարմինների ներգործության «զոհ» է համարում, պատիժը գնահատում է որպես ճակատագրի կողմից իրեն բաժին հասած զրկանքների ամբողջություն և համարժեք չի ընկալում տուժողին պատճառված վնասի համար իր նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը:

Քննարկվող գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Տուժողի հետ հաշտվելը որպես մեղիացիայի տարատեսակ» քննարկվում են տարբեր երկրների քրեական և քրեադատավարական օրենսդրություններում արդեն վաղուց նախատեսված և կիրառվող այն նորմերի առանձնահատկությունները, որոնց հիման վրա հնարավոր է իրավական կոնֆլիկտի լուծումը վիճող կողմերի միջև փոխշահավետ համաձայնության և հաշտության կայացման միջոցով: Նշվում է, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում և կայուն ժողովրդավարական ավանդույթներով մի շարք այլ պետություններում հանցագործություններին արձագանքելու, այսպես կոչված, հաշտողական մարտավարությունը բավականին լայն տարածում է ստացել դեռևս 1970-1980-ական թվականներից:

Ժամանակակից աշխարհում, հեղինակի խոսքերով, տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի զարգացումը շատ երկրների քրեական քաղաքականության մեջ մեծ դեր է խաղում՝ նպաստելով ինչպես տուժողների իրավունքների պաշտպանությանը, այնպես էլ հանցանք կատարողների սոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այդ առումով վճռորոշ դեր ունի արտասահմանյան մի շարք երկրներում արդյունավետորեն կիրառվող մեղիացիայի ինստիտուտը, որի էությունն այն է, որ կոնֆլիկտային կողմերը՝ հան-

ցավորն ու տուժողը, իրավասու պետական մարմինների թույլտվությամբ փորձում են իրենց միջև առկա վեճը լուծել քրեական արդարադատության շրջանակներից դուրս՝ դիմելով միջնորդի դերում հանդես եկող կա՛մ երրորդ անձանց, կա՛մ հասարակական կազմակերպությունների, կա՛մ պետական մարմինների օգնությամբ: Ռ.Ռ. Մաքսուդովի, Մ.Գ. Ֆլյամերի և Ա.Կ. Գրասենկովայի տվյալներով ներկայումս մեդիացիոն բնույթի մոտ 300 ծրագրեր են գործում ԱՄՆ-ում և Կանադայում, մոտ 500-ը՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Սկանդինավիայի երկրներում, Լեհաստանում, Չեխիայում:<sup>2</sup> Տվյալ ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն, նույնիսկ, նախորդ դարավերջում ընդունել է մի շարք հանձնարարականներ, որոնք պարտադիր են ետև անդամ պետությունների համար: Մասնավորապես, քրեական գործերով մեդիացիայի ինստիտուտի կիրառման հարցերին է անդրադառնում ետև նախարարների կոմիտեի կողմից 1999 թվականի սեպտեմբերի 15-ին ընդունված թիվ R(99)19 հանձնարարականը, որի համաձայն՝ մեդիացիան վեճի լուծման այլընտրանքային միջոց է, վիճող կողմերի հաշտեցման գործընթաց, որի պարագայում անկողմնակալ միջնորդի ներկայությամբ կողմերը փոխըմբռնման և համաձայնության կայացման նպատակով վեճի լուծմանն ուղղված բանակցություններ են վարում:

Քննարկվում են նաև մեդիացիայի իրականացման հետևյալ սկզբունքները.

1. Մեդիացիա կարող է իրականացվել միայն կողմերի համաձայնությամբ: Քանի որ կողմերի համաձայնության բացակայության դեպքում մեդիացիան արդյունք չի ունենա, հետևաբար կարևոր նախապայման է կողմերի կամահայտնությունը՝ վեճը լուծել մեդիացիայի ճանապարհով: Դա է վեճի մեդիացիոն և դատավարական կարգով լուծման գլխավոր տարբերությունը: Մեդիացիայի ժամանակ գործի ելքը կախված է կողմերից և ցանկացած պահի նրանք կարող են հրաժարվել դրանից: Ընդ որում, միջնորդը պարտավոր է կողմերին բացատրել այդ իրավունքների մասին:

2. Մեդիացիայի ժամանակ պետք է պահպանվի գաղտնիությունը: Այս սկզբունքի նախատեսումը պայմանավորված է երկու կարևոր պատճառներով՝ մի կողմից, գաղտնիությունը կարևոր նախապայման է արդյունավետ երկխոսության և ցանկալի արդյունքների հասնելու համար, մյուս կողմից, գաղտնիության պահպանման միջոցով պաշտպանվում են կողմերի իրավունքները: Բանակցությունների բովանդակությունը չի կարող հրապարակվել առանց կողմերի համաձայնության: Բայց կա մեկ բացառություն. միջնորդը պարտավոր է իրավասու մարմիններին հայտնել նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին, որն իրեն հայտնի է դարձել մեդիացիայի ժամանակ:

3. Պետք է պահպանվի հանրամատչելիության սկզբունքը, որի համաձայն՝ պետությունը պետք է մեդիացիայի ինստիտուտի զարգացման միջոցներ ձեռնարկի և դրանք հանրամատչելի դարձնի հասարակության համար:

<sup>2</sup> St'u Максудов Р., Флямер М., Грасенкова А. Институт примирения в уголовном процессе: необходимость и условия развития // Уголовное право, 1998, № 1, էջ 69:

4. Մեդիացիայի դիմելը պետք է հնարավոր լինի քրեական դատավարության ցանկացած փուլում: Սակայն տարբեր երկրներում այս հարցը տարբեր կերպ է լուծվում. այն դեպքում, երբ մեդիացիայի որոշ տեսակներ կարող են կիրառվել քրեական դատավարության բոլոր փուլերում, մյուսները՝ միայն որոշ փուլերում:

5. Մեդիացիայի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է, որ այն իրականացնող մարմինը (անձը) լինի անկախ և չգտնվի այլ մարմնի ազդեցության տակ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի առանձնահատկություններն արտասահմանյան երկրներում», ատենախոսն անդրադառնում է քրեական պատասխանատվությունից ազատելու տվյալ ինստիտուտի կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրներին ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Մեծ Բրիտանիայում, Շոտլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Նիդերլանդներում և մի շարք այլ երկրներում:

Նշվում է, որ մայրցամաքային իրավական համակարգի տարբեր երկրներում տուժողի հետ հաշտությունը դիտվում է որպես կա՛նք քրեական պատասխանատվությունից, կա՛նք պատժից ազատելու հիմք, կա՛նք պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Ընդ որում, այդ երկրներում տուժողի հասկացությունն ու կարգավիճակը, որպես կանոն, օրենսդրորեն ամրագրված են: Ավելին, տվյալ անձի նկատմամբ կատարված համապատասխան ոտնձգության՝ որպես հանցագործության գնահատումը թողնված է տուժողի հայեցողությանը: Սակայն նման դեպքերում ոտնձգությունը, եթե այն գնահատվում է որպես հանցավոր, համարվում է քրեական օրենքի ոչ էական խախտում (cont-ravention): Նման դրույթներ են պարունակում մայրցամաքային իրավական համակարգի եվրոպական մի շարք երկրների (Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Նիդերլանդների) քրեական գործող օրենքները: Ի դեպ, նշված ակտերի համապատասխան դրույթների համաձայն, նման «խախտումների» սահմանումը հաճախ տրվում է ոչ թե քրեական օրենքում, այլ պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերում՝ «որոշումներում»:

Անգլասաքսոնական իրավական համակարգի երկրներում քրեական իրավունքի (որպես հանրային իրավունքի առանձին ճյուղի) հիմնական խնդիրներից են «հանրային շահի սահմանումը և մասնավոր շահերի պաշտպանությունը (to protect the private interests)»: Բնականաբար, ըստ հեղինակի, նման «մասնավոր շահ» նախ և առաջ պետք է համարել հանցագործություններից տուժած անձանց իրավունքները: Ուստի տուժողի իրավական կարգավիճակը կապված է նյութական իրավունքի նորմերով սահմանված հասկացությունների հետ:

Նշվում է նաև, որ անգլասաքսոնական իրավական համակարգի երկրների օրենքները վերոհիշյալ ինստիտուտը անմիջականորեն կարգավորող նորմեր չեն պարունակում: Գործնականում քննարկվող իրավահարաբերությունները բավականին հաճախ տեղի են ունենում, այսպես կոչված, «մեղքի ընդունման գործարքների» շրջանակներում:



Ամփոփելով ասվածը՝ հեղինակը եզրակացնում է, որ հանցանք կատարած անձի և նրա հանցագործությունից տուժողի միջև հաշտության ինստիտուտի զարգացման արտասահմանյան երկրների դրական փորձը լիովին կիրառելի է նաև Հայաստանի Հանրապետությունում և կարող է էապես նպաստել մեր երկրի քրեական օրենսդրությամբ նախատեսված խնդիրների իրականացմանը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Տուժողի հետ հաշտվելը որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք», բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում՝ «Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու չափանիշներն ըստ ՀՀ քրեական օրենսդրության», հեղինակը նշում է, որ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը չի կարող դասվել զուտ քրեաիրավական հիմնախնդիրների շարքը և համաձայնում մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն արտահայտված այն կարծիքին, որ տվյալ դեպքում խոսքը համալիր քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտի մասին է:<sup>3</sup> Նպատակ չունենալով մանրամասն քննարկել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու քրեադատավարական առանձնահատկությունները՝ ատենախոսն անդրադառնում է դրա քրեաիրավական չափանիշներին ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի: Շեշտադրվում են անհրաժեշտ ու բավարար այն չափանիշները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում տուժողի հետ հաշտությունը կարող է իրավաբանական նշանակություն ունենալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Դրանք են՝

1) կատարված արարքը պետք է լինի ոչ մեծ ծանրության հանցագործություն,

2) տուժողը և հանցանք կատարած անձը պետք է հաշտվեն,

3) հանցանք կատարած անձը պետք է հատուցի կամ այլ կերպ հարթի տուժողին պատճառված վնասը:

Այդ առումով նշվում է, որ տեսության մեջ և պրակտիկայում տարակարծությունների տեղիք են տալիս մի շարք հարցեր, որոնց հստակեցումն ու օրենսդրական առավել հստակ կարգավորումը կնպաստեն քրեական օրենքի կիրառման արդյունավետության բարձրացմանը և իրավակիրառական պրակտիկայի միասնականության ապահովմանը:

Դրանցից մեկն այն է, այն է, թե կարելի՞ է արդյոք քննարկվող ինստիտուտը կիրառել այն դեպքերում, երբ անձի կողմից կատարված արարքում առկա է հանցագործությունների բազմակիություն: Այդ իմաստով, թեև, քր. օր.-ը որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն, ըստ հեղինակի, հիշյալ ինստիտուտը չպետք է կիրառվի իրական համակցության և ռեցիդիվի դեպքերում: Միևնույն ժամանակ այդ սահմանափակումը չպետք է տարածվի իդեալական համակցության դեպքերի վրա, քանի որ այս պարագայում, թեև, հանցավորի արարքում առկա են երկու կամ

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ՝ Томин В., Сверчков В. Соотношение уголовного материального и процессуального законодательств // Законность, 2002, № 5, էջ 6, Якубов А. Процессуалисты “совершенствуют” уголовный закон // Законность, 2003, № 1, էջ 3, Наумов А. Нормы других отраслей права как источник уголовного права // Законность, 2002, № 7, էջեր 42-43, Ендольцева А.В. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим (некоторые аспекты применения соответствующих норм уголовного и уголовно-процессуального законодательства) // Российский следователь, 2001, № 9, էջեր 29-30:

ավելի ինքնուրույն հանցակազմեր, սակայն դրանք կատարվել են միաժամանակ և չեն կարող վկայել հանցագործի կայուն հանցավոր հակումների ու դիրքորոշումների մասին:

Մյուս հարցը կապված է երկօբյեկտ հանցագործությունների դեպքերում քննարկվող ինստիտուտի կիրառման հնարավորության հետ: Այս կապակցությամբ ատենախոսը կարծիք է արտահայտում, որ տվյալ պարագայում տուժողի հետ հաշտության հիմքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի կարող կիրառվել, քանի որ նշված հանցագործությունների սուբյեկտների հետ հաշտությունը չի կարող վերացնել հիմնական օբյեկտին պատճառած վնասը:

Միևնույն ժամանակ նշվում է, որ ցանկացած հանցագործություն ուղղված է ոչ միայն տուժողի մասնավոր, այլև հանրային շահերի դեմ: Հետևաբար, հանցանք կատարած անձի և հանցագործությունից տուժողի միջև հաշտության կայացման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը պետք է լինի համապատասխան պետական մարմինների ոչ թե պարտականությունը, այլ իրավունքը: Ուստի ճիշտ է համարվում այն մոտեցումը, որ քննարկվող ինստիտուտի կիրառումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ իրավակիրառողը, հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, հանգում է եզրակացության, որ քրեական հետապնդման դադարեցումը չի հակասում քրեական և քրեադատավարական օրենքների խնդիրներին և դրանցով պաշտպանվող շահերին:

**Քննարկվող գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու արդի հիմնախնդիրները քրեական իրավունքի տեսության մեջ և իրավակիրառական պրակտիկայում»,** ատենախոսը նշում է, որ տվյալ ինստիտուտի վերաբերյալ թե՛ քրեաիրավական տեսության մեջ և թե՛ իրավակիրառական պրակտիկայում առկա են բազմաթիվ վիճահարույց հարցեր, որոնց անհրաժեշտ է լուծում տալ ինչպես քրեական օրենքի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու, այնպես էլ դատաքննչական պրակտիկայի միատեսակությունն ապահովելու նպատակով:

Այդ հարցերից մեկն այն է, թե որքանով է հիմնավորված օրենսդրի կողմից միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների պարագայում այս ինստիտուտի կիրառման հնարավորության նախատեսումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայրենական օրենսդիրը գործուն գոյալու և իրադրության փոփոխման դեպքում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է համարում ինչպես ոչ մեծ, այնպես էլ միջին ծանրության հանցագործությունների դեպքերում՝ ատենախոսը կարծում է, որ ճիշտ կլինի, նույն տրամաբանությունից ելնելով, հնարավոր համարել նաև ՀՀ քրեական օրենսգրքով տուժողի և միջին ծանրության հանցանք կատարած անձի հաշտության դեպքում վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն սահմանելը:

Վեճերի տեղիք տվող հարցերից է նաև այն, թե արդյո՞ք ճիշտ է տուժողի հետ հաշտության պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կիրառել նաև այն անձի նկատմամբ, ով նախկինում հանցանք է կատարել: Այս առումով հեղինակը կարծիք է արտահայտում, որ ՀՀ օրենսդրի կողմից դրսևորված մոտեցումն առավել ճիշտ է:

Հաջորդ խնդիրը, ըստ ատենախոսի, վերաբերում է այն դեպքերին, երբ տուժողը կամ հանցավորը անչափահաս են կամ անմեղսունակ, կամ եթե հանցագործությունից հետո տուժողը մահացել է: Նշված հարցերի կարգավորման նպատակով հեղինակն առաջարկում է հաշվի առնել արտասահմանյան մի շարք երկրների դրական փորձը:

**Եզրակացության** մեջ ընդհանրացված ձևով ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Քննարկվող ինստիտուտի կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել հանցանք կատարած անձի ապաստոցիալացումից, ինչպես նաև պաշտպանել տուժողի իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ապահովել նրան պատճառված վնասի փոխհատուցումը, նրա պահանջմունքների բավարարումը, սոցիալական արդարության վերականգնումը, նվազեցնել ռեցիդիվային հանցավորության մասնաբաժինը, կրճատել քրեական արդարադատության իրականացման, ինչպես նաև ազատազրկման դատապարտվածներին պահելու համար կատարվող ծախսերը, իսկ խնայված ֆինանսական միջոցներն ուղղել առավել բարդ գործերի քննությանը և անհետաձգելի լուծում պահանջող խնդիրների կարգավորմանը:

2. Քրեական պատասխանատվությունը հանցագործության կապակցությամբ առաջացած հասարակական հարաբերություն է, որը, կարգավորվելով քրեական իրավունքի նորմերով, ձեռք է բերում իրավաբանական բովանդակություն, դառնում է քրեաիրավական հարաբերության բաղկացուցիչ մաս: Այդ իրավահարաբերության էությունը կայանում է՝ 1) հանցագործի՝ իր կատարածի համար հաշիվ տալու և հարկադրանքի միջոցներ կրելու պարտականության, 2) դատապարտման և պարսավանքի, 3) պետական հարկադրանքի միջոցի նշանակման և 4) դատվածության մեջ:

3. Թեև քրեական արդարադատության հիմնարար ելակետային դրույթներից մեկը պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն է, այնուամենայնիվ, քրեական օրենսդրության կիրառման պրակտիկան ցույց է տվել, որ ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար (կամ գոնե՝ արդյունավետ) հանցանք կատարելու համար անձին պարտադիր քրեական պատասխանատվության ենթարկելը և պատժելը: Հաճախ հանցանք կատարած անձի նկատմամբ մարդասիրություն դրսևորելը, նրան վստահելը, նրա նկատմամբ ներողամիտ լինելը շատ ավելի դրական ազդեցություն են թողնում և արդյունավետ նշանակություն ունենում, քան նրան քրեական պատասխանատվության ենթարկելն ու պատժելը:

4. Քրեական արդարադատության զարգացման պատմությունը վկայում է, որ տարբեր երկրների քրեական և քրեադատավարական օրենսդրություններում արդեն վաղուց նախատեսված են նորմեր, որոնց հիման վրա հնարավոր է իրավական կոնֆլիկտի լուծումը վիճող կողմերի միջև փոխշահավետ համաձայնության և հաշտության կայացման միջոցով: Այդ կապակցությամբ նախատեսված են նաև տուժողի հետ հաշտության և հանցագործությամբ պատճառած վնասի հատուցման հետևանքով քրեական հետապնդման դադարեցման կամ դրանից հրաժարվելու համապատասխան ձևեր, որոնցից առավել տարածվածը մեդիացիան է:

5. Արտասահմանյան երկրների ճնշող մեծամասնությունում օրենսդրական մակարդակով կարգավորում են ստանում հանցանք կատարած անձի և հանցագործությունից տուժողի միջև հաշտության կայացման և դրա հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու կամ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնելու հարցերը: Բացի այդ, այս ինստիտուտի կիրառումը հնարավորություն է ընձեռում ապահովել «վերականգնողական» արդարադատության արդյունավետությունը՝ ինչպես բազմակողմանիորեն պաշտպանելով հանցագործությունից տուժած անձին, այնպես էլ ապահովելով հանցավորի վերասոցիալականացումը:

6. Տուժողի հետ հաշտվելու հիմքով հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած նորմերի համեմատական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ որոշակի հակասություններ են նկատվում ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածներ 36-ի, 183-ի 1-ին մասի և 37-ի միջև:

7. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի համաձայն՝ հանցավորին կարելի է ազատել քրեական պատասխանատվությունից միայն ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքում: Սակայն հոդվածի տրամաբանությունից բխում է նաև, որ ոչ միայն կատարվող արարքը պետք է լինի ոչ մեծ ծանրության հանցագործություն, այլև պետք է առկա լինի կոնկրետ տուժող:

8. Քրեական պատասխանատվությունից ազատելու քննարկվող հիմքը չպետք է կիրառվի իրական համակցության կամ ռեցիդիվի դեպքերում: Այդ հանգամանքների առկայությունն արդեն իսկ կվկայի հանցանք կատարած անձի կայուն հանցավոր գործունեության մասին, մինչդեռ քննարկվող ինստիտուտի նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցանքի կատարումը հանցավորի համար կրում է պատահական, էպիզոդիկ բնույթ: Սակայն այս սահմանափակումը չպետք է տարածվի իդեալական համակցության դեպքերի վրա, քանի որ այդ պարագայում, թեև, հանցավորի արարքում առկա են երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմեր, սակայն դրանք արդյունք են մեկ գործողության կամ անգործության, ինչը չի կարող վկայել հանցավորի կայուն հանցավոր հակումների մասին:

9. Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև քննարկվող ինստիտուտի կիրառման հնարավորությունը երկօբյեկտ հանցագործությունների դեպքերում, այսինքն՝ երբ ոտնձգությամբ վնասվում են քրեական օրենքով պաշտպանվող մի քանի պարտադիր անմիջական օբյեկտներ՝ հիմնականը և լրացուցիչը: Նշված հանգամանքներում չի բացառվում, որ հիմնական օբյեկտի վնասման ժամանակ «տուժող» չլինի, մինչդեռ նա առկա լինի լրացուցիչ օբյեկտի վնասման պարագայում: Այս դեպքերում, սակայն, տուժողի հետ հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը չի կարող կիրառվել, քանի որ նշված հանցագործությունների սուբյեկտի հետ հաշտությունը չի կարող վերացնել հիմնական օբյեկտին պատճառված վնասը:

10. Քննարկվող ինստիտուտի կապակցությամբ պարզաբանման կարիք ունի նաև այն հարցը, թե հնարավոր է արդյո՞ք գործուն գղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը այն դեպքերում, երբ հանցավորի և տուժողի միջև հաշտություն չի կայացել: Այս կապակցությամբ, ըստ էության, թե՛ գործուն

զղջալու և թե՛ տուժողի հետ հաշտվելու հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտները ունեն որոշակի նմանություն և հանցանքի ավարտից հետո հանցավորի վարքագծի նկատմամբ համանման պահանջներ: Ուստի չի բացառվում, որ անձը, ում հետ տուժողը չի հաշտվել, հնարավորություն ունենա ազատվել քրեական պատասխանատվությունից մեկ այլ հիմքով՝ գործուն զղջալու հետևանքով, քանի որ դրա կիրառման համար տուժողի համաձայնության առկայությունը որևէ նշանակություն չունի: Միևնույն ժամանակ առաջ է գալիս մեկ այլ հարց. ճիշտ է, գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս տուժողը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բողոքարկել կայացված որոշումը, սակայն նման իրավիճակում, փաստորեն, չեն ապահովվում նրա իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար ճիշտ կլինի, որ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվի նորմ, որը կսահմանի, որ, եթե քր. օր.-ի հոդված 73-ի կիրառման համար հանցավորի և տուժողի միջև հաշտություն չի կայացել, հանցավորը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից հոդված 72-ի ուժով՝ գործուն զղջալու հիմքով:

11. ՀՀ քրեական օրենսգրքում, ցավոք, կարգավորում չեն ստացել այն հարցերը, թե ինչպե՞ս պետք է վարվել անչափահաս տուժողի կամ հանցավորի կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ տուժողի, մի քանի հանցավորների կամ մի քանի տուժողների առկայության պարագաներում: Այս առումով անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով կարգավորում տալ նշված հարցերին և վերջ դնել բոլոր տարակարծություններին ու վեճերին:

12. Գիտական վեճերի տեղիք է տալիս նաև այն հարցը, թե նպատակահարմար չէ արդյո՞ք այս ինստիտուտի կիրառումը նախատեսել նաև միջին ծանրության բոլոր հանցագործությունների համար: Առաջին հերթին դա պայմանավորված է տուժողի շահերի նկատառումներով, քանի որ նման իրավիճակներում քրեական պատասխանատվությունից ազատման կարևոր պայմաններից մեկը տուժողին պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պարտադիր բնույթն է, ինչը տուժողի համար, որպես կանոն, առավել նախընտրելի է, քան հանցավորին պատժի ենթարկելն ու իրեն պատճառված վնասի հատուցման մասին, ըստ էության, մոռանալը: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը գործուն զղջալու և իրադրության փոփոխման դեպքերում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է համարում ինչպես ոչ մեծ, այնպես էլ միջին ծանրության հանցագործությունների պարագայում, թերևս, ճիշտ կլինի, նույն տրամաբանությունից ելնելով, հնարավոր համարել նաև տուժողի և միջին ծանրության հանցանք կատարած անձի հաշտության դեպքում վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելը: Ավելին, միջին ծանրության հանցագործությունների դեպքերում տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության ու նպատակահարմարության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183-ի առաջին մասում օրենսդիրը, թվարկելով մասնավոր հետապնդման գործերը, նախատեսում է ոչ միայն ոչ մեծ, այլև միջին ծանրության բազմաթիվ հանցագործություններ: Այսինքն, եթե օրենսդիրը նման դեպքերում տուժողի կամահայտնությունը դիտում է որպես պարտադիր իմպերատիվ պահանջ և հանցավորին ազատում քրեա-

կան պատասխանատվությունից, ապա ենթադրվում է, որ միջին ծանրության հանցագործությունների դեպքերում տուժողի և հանցավորի միջև հաշտության կայացման պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն ընձեռելը լիովին արդարացված է:

13. Տուժողի հետ հաշտության հիմքով հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտն իր արտացոլումն է գտել նաև արտասահմանյան այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Շվեդիան, Շվեյցարիան, ՅուՆԱՅԿ-ը և այլն: Այդ կապակցությամբ մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ նշված երկրներում, ընդհանուր առմամբ, քննարկվող ինստիտուտի կիրառման պայմաններն էապես չեն տարբերվում ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվածներից: Սակայն հարկ է ընդգծել մի կարևոր առանձնահատկություն, որն առկա է, օրինակ, Գերմանիայի և Շվեյցարիայի քրեական օրենսգրքերում: Մասնավորապես, խոսքը մի շարք վիճահարույց հարցերի օրենսդրական լուծման մասին է, որն իր անմիջական ամրագրումն է գտել վերոհիշյալ երկրների քրեական օրենսգրքերում: Այսպես, Շվեյցարիայի քրեական օրենսգրքը սահմանում է, թե ինչպես պետք է վարվել այն դեպքերում, երբ առկա են մեկ տուժող և մի քանի հանցավորներ, իսկ հաշտությունը կայացել է նրանցից միայն մեկի հետ: Բացի այդ, տվյալ օրենքը հստակ պարզաբանում է, թե ով պետք է հանդես գա որպես հաշտության կողմ անգործունակ և անչափահաս տուժողների պարագայում և այլն: Նմանատիպ լուծումներ առկա են նաև Գերմանիայի քրեական օրենսգրքում: Կարևորն այն է, որ առաջադրված հարցերի հստակ օրենսդրական կարգավորումը, անկասկած, հնարավորություն է ընձեռում խուսափել տեսության մեջ և իրավակիրառական պրակտիկայում ծագող բազմաթիվ վիճահարույց հարցերից:

14. ՀՀ քրեական օրենսգրքը և հայ իրավակիրառողներն էապես կշահեն, եթե, տուժողի և հանցավորի հաշտության պարագայում հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կարգավորելիս, Շվեյցարիայի կամ Գերմանիայի քրեական օրենսգրքերի օրինակով, օրենսդրական լուծումներ տրվեն նաև քննարկվող ինստիտուտի կիրառման ժամանակ ծագող վերոհիշյալ հարցերին:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈՒԼԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվությունից ազատելու հասկացության և հիմքերի մասին // Պետություն և իրավունք, 2011, № 4(54), էջեր 40-47:

2. Տուժողի հետ հաշտության ինստիտուտը՝ քրեաիրավական կատեգորիա // Օրինականություն, 2012, № 70, էջեր 39-44:

3. Տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի առանձնահատկություններն արտասահմանյան երկրներում // «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, «Անտարես» հրատ., № 3-4 (152-153), 2012, էջեր 30-39:

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ  
ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НА ОСНОВАНИИ ПРИМИРЕНИЯ  
С ПОТЕРПЕВШИМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

В диссертации исследуются теоретические и практические проблемы применения института освобождения от уголовной ответственности на основании примирения с потерпевшим в Республике Армения. В этом контексте рассматриваются вопросы понятия и оснований освобождения от уголовной ответственности по действующему УК РА. В данной связи прежде всего отмечается, что в теории уголовного права по сей день не существует единого подхода относительно ни понятия, ни сущности, ни основания уголовной ответственности. Анализируя мнения ученых по данным вопросам, автор заключает, что хотя все они в определенной степени верны, однако относятся лишь к отдельным элементам, проявлениям уголовной ответственности. Именно по этой причине в последнее время все большее распространение получает мнение о том, что уголовная ответственность – это сложное структурное явление, характеризующееся комплексом различных признаков.

Долгая практика применения уголовного закона свидетельствует о нецелесообразности привлечения к уголовной ответственности лиц, совершивших преступление, во всех случаях. Более того, привлечение к уголовной ответственности лиц, нарушивших уголовно-правовой запрет случайно и не причинивших обществу серьезного вреда может оказаться не полезным, а, наоборот, вредоносным. Следовательно не случайно, что уголовным и уголовно-процессуальным законодательством практически всех современных демократических стран (РА в том числе) предусмотрены различные основания освобождения от уголовной ответственности.

Следовательно в предусмотренных законом случаях основополагающее положение о неотвратимости ответственности может быть ограничено принципом целесообразности. В частности, соглашаясь со многими зарубежными учеными, автор утверждает, что правильная оценка соотношения неотвратимости и целесообразности имеет важное значение для повышения эффективности борьбы с преступностью.

Отмечается необходимость правового регулирования таких вопросов, связанных с практикой применения института освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, как возможность и особенности применения данного института в случаях, когда потерпевшим является несовершеннолетний или недееспособное лицо, а также, когда

имеется несколько потерпевших или лиц, совершивших преступление. Подчеркивается также важность скорейшего законодательного регулирования возможности применения данного вида освобождения от уголовной ответственности в случаях смерти потерпевшего. Кроме того, в уточнении нуждаются особенности примирения потерпевшего с несколькими соучастниками, а также преступника с несколькими потерпевшими.

В связи с понятием «совершение преступления впервые» предлагается брать за основу ту позицию, согласно которой, если разорваны все правовые связи лица с предыдущим преступлением (в соответствии с ч. 8 ст. 84 УК РФ погашение или снятие судимости аннулирует все правовые последствия, связанные с судимостью), то новое преступление не может считаться совершенным повторно. Однако в подобных случаях, решая вопрос освобождения от уголовной ответственности, следует учитывать не факт повторного совершения преступления, а личность преступника. В частности, если он ранее умышленно совершил однородное преступление и в порядке, предусмотренном законом, был освобожден от уголовной ответственности, значит проявление в отношении него гуманизма не дало положительного результата, не было эффективным.

Критике подвергается то обстоятельство, что по действующему УК РФ лицо, с которым потерпевший не примирился, может быть освобождено от уголовной ответственности на другом основании, а именно – в результате деятельного раскаяния, поскольку в последнем случае согласие потерпевшего не имеет какого-либо правового значения. В результате не обеспечивается защита прав потерпевшего. Следовательно необходимо в УК РФ предусмотреть норму, в соответствии с которой, если имелись основания применить ст. 73 УК РФ, однако потерпевший и лицо, совершившее преступление, не примирились, то данное лицо не может быть освобождено от уголовной ответственности по ст. 72 (на основании деятельного раскаяния).

Учитывая то обстоятельство, что при деятельном раскаянии и изменении обстановки законодатель считает возможным освобождение лица, совершившего преступление, как в случаях совершения преступлений небольшой, так и средней тяжести, подчеркивается необходимость внесения соответствующих изменений и в ст. 73 УК РФ. В частности, предлагается предусмотреть возможность освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим также в случаях совершения преступлений средней тяжести.



ALBERT VARDAN ABRAHAMYAN

THEORETICAL AND PRACTICAL PROBLEMS OF THE  
EXAMPTION FROM CRIMINAL LIABILITY BASED ON THE  
RECONCILIATION WITH THE VICTIM IN THE REPUBLIC OF ARMENIA

RESUME

This thesis is dedicated to the research of the theoretical and practical problems of the applying of the institute of the exemption from criminal liability based on the reconciliation with the victim in the Republic of Armenia. In this context the issues connected with the concept and principles of the exemption from criminal liability according to the acting Criminal Code of the Republic of Armenia are discussed in this dissertation. In particular, first of all is mentioned, that in the theory of criminal law there is no common approach on the concept and principles of the exemption from criminal liability. Author analyzes opinions of different scientists and concludes, that all of them are correct, but apply only to the individual elements, and in manifestations of criminal responsibility. For this reason he indicates, that criminal liability is a complicated, structural phenomenon, which is characterized by the complex of various attributes.

The long time practice of acting of the criminal legislation demonstrates the inexpediency of bringing to justice those who have committed a crime in all circumstances and for every crime. Moreover, the criminal prosecution of persons who violating criminal prohibition accidentally and causing not serious harm to the public relationships, in autor's opinion, may not be useful, but rather harmful. Therefore it is not casual, that Criminal and Criminal-Procedural codes of many present-day democratic countries (including the Republic of Armenia) contain the principles of the exemption from criminal liability.

Consequently, in the cases provided by criminal law the fundamental provision of the inevitability of punishment may be limited by the principle of effectiveness. In particular, agreeing with many foreign scientists, the author argues that a correct assessment of the ratio of the inevitability and desirability, in the end, is very important for the efficiency of the fight against crime.

The necessity of legal regulation of issues related to the practice of the Institute of exemption from criminal liability due to reconciliation with the victim, as the capabilities and features of this institution in cases where the victim is a minor or incapacitated person, as well as when there are two or more victims or criminals. The importance of urgent legislative regulation of the possibility of using this type of

exemption from criminal liability in cases of death of the victim is underlined also. In addition, the need to clarify the features of reconciliation between the victim with multiple accomplices, as well as the offender with multiple victims.

In connection with the term "the crime for the first time" is proposed to base the position, according to which, if severed all legal ties with the previous crime (in accordance with Part 8 of Art. 84 of the Criminal Code of the RA canceled or conviction void all legal consequences arising with a criminal record), the new offense can not be considered as committed for a second time. But in such cases, solving the issue of the release from criminal liability, it should be not a fact re-offending, and the identity of the perpetrator. In particular, if it has previously intentionally committed a crime and in the manner provided by law, has been released from criminal responsibility, then it shows that the humanism in relation to the offender did not give a positive result, it was not effective.

Moreover, criticised the fact that under the current Criminal Code of the RA person with whom the victim was not reconciled, can be exempted from criminal liability on other grounds, namely - as a result of active repentance, since in the latter case, the consent of the victim does not have any legal significance. The result is not the victim's rights are protected. Hence it is necessary to provide for the rate of the RA Criminal Code, according to which, if there is reason to apply the Art. 73 of the Criminal Code of the RA, but the victim and the perpetrator, not reconciled, the person can not be exempted from criminal liability under the Art. 72 of the Criminal Code of the RA (on the basis of active repentance).

Given the fact that in accordance to the Criminal Code of the RA in the cases of the active repentance and the changes in the situation it is possible to release the offender, as in cases of crimes of the small and the medium gravity, emphasizes the need to make the appropriate changes, and the Art. 73 of the Criminal Code of the Republic of Armenia. In particular, it is proposed to provide for the possibility of not criminally responsible due to reconciliation with the victim in cases of the crimes of the medium gravity.